ԱԶԳ

# Արտերկիր

Պաշտոնական Երեւանը մտահոգված է Հայաստանը շրջանցող տարածաշրջանային եւ մեկ նախագծի՝ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղու կառուցումից: Եթե ընդամենը մի քանի շաբաթ առաջ Հայաստանի իշխանություններն այդ երկաթուղու կառուցումը համարում էին հարեւան երեք հանրապետությունների, մասնավորապես Ադրբեջանը եւ Թուրքիան միմյանց կապող Վրաստանի ներքին գործ (նման ոգով արտահայտվեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանը Ջավախք կատարած այցի օրերին), ապա այսօր ակնհայտ է դառնում շեշտադրության փոփոխությունը:

ակնարկում են, որ դրանով Վրաստանը նպաստում եւ տեւական է դարձնում Հայաստանի շրջափակումը, ապա Թբիլիսիում այլ կարծիքի են: Օրինակ, Վրաստանի խորհրդարանի Եվրատլանտյան ինտեգրացիայի հարցերով հանձնաժողովի նախագահ Դավիթ Բաքրաձեն կարծիք է հայտնում, որ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգիծը ոչ միայն չի մեկուսացնի Հայաստանը, այլեւ ընդհակառակը՝ հարեւան հանրապետությանը կբերի տնտեսական օգուտներ: «Եթե Հայաստանը Թուրքիայի եւ Եվրոպայի հետ կապվի Վրաստանի տարածքով, ապա այս փուլում դա կլինի հաջողված քայլ հենց Հայաստանի համար», նշում է նա:

Ղարաբաղի շրջափակումը: Բայց բավական էր Վաշինգտոնի շահերից բխեր հակաահաբեկչական պայքարում Բաքվի հետ համագործակցությունը եւ 907 ուղղումը կասեցվեց:

Երբ 90-ականների կեսերին խոսվում էր Հայաստանը շրջանցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի կառուցման հավանականության մասին, Հայաստանում եւ Ռուսաստանում թերահավատորեն էին վերաբերվում այդ ծրագրերին՝ դրանք համարելով քաղաքական: Ասվածի մեջ ճշմարտություն կար, սակայն այսօր Բաքու-Թբիլիսի Ջեյհանն արդեն պատրաստ է

## Վրաստանը կարող է տեւական դարձնել Հայաստանի շրջափակումը

### *Երեւանը մտահոգված է Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծի կառուցումից*

Հայաստանի արտգործնախարարն իր վերջին ասուլիսում նշեց, որ Վրաստանն ու Ադրբեջանը բարոյական իրավունք չունեն կառուցելու այդ երկաթգիծը, եթե անգամ նախագծի ֆինանսավորումը կատարվի ոչ դոնոր կազմակերպությունների, այլ այդ երկրների բյուջեներից: «Այսօր կա Կարս-Գյումրի երկաթգիծ, որը չի աշխատում Թուրքիայի վարած սխալ քաղաքականության պատճառով: Մենք կարծում ենք, որ նոր երկաթգիծ կառուցելուն միտված յուրաքանչյուր ներդրում, որը կշրջանցի արդեն գոյություն ունեցող երկաթգիծը, անիմաստ է: Մենք պայքարելու ենք դրա դեմ», ասաց Վարդան Օսկանյանը եւ ընդգծեց, որ Հայաստանը փորձելու է շահագրգիռ երկրներին ապացուցել Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղու կառուցման անիմաստ լինելը:

Հայաստանը շրջանցող երկաթգծի կառուցման հավանականությունը հավանաբար իրական է, այլապես պաշտոնական Երեւանն արտգործնախարարի շուրթերով ակնհայտ անհանգստության նշաններ ցույց չէր տա: Ըստ էության Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծի կառուցմամբ Կարս-Գյումրի երկաթգիծը մոռացության կմատնվի: Համենայն դեպս, Թուրքիան շարունակում է Հայաստանի ցամաքային շրջափակումը, եւ քանի դեռ հայ-թուրքական սահմանը փակ է, Անկարայի եւ Երեւանի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հեռանկարները իրատեսական չեն, Կարս-Գյումրի երկաթգծի վերաշահագործումն առաջիկա տարիներին հավանական չի թվում:

Եթե Երեւանում Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծի կառուցումն ընկալվում է ոչ բարեկամական քայլ Վրաստանի կողմից, ավելին՝ հայկական իշխանություններն

Արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլին մի քանի օր առաջ լրագրողների հետ զրույցում նշել է, որ նախագիծը Հայաստանի հավանությանը չի արժանանում, եւ Թբիլիսին պատրաստ է քննարկելու նաեւ այլ երթուղիներ, բայց, մյուս կողմից, Վրաստանի իշխանությունները թույլ չեն տա, որ որեւէ երկիր, այդ թվում Հայաստանը փորձի խոչընդոտել ծրագրի իրականացմանը, ավելին՝ Միացյալ Նահանգների միջոցով: Հուլիսին ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամներ, կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնը, Ջո Նոլենբերգը եւ Ջորջ Ռադանովիչը Ներկայացուցիչների պալատին են ներկայացրել մի օրինագծի նախագիծ, ըստ որի Մ. Նահանգներին արգելվում է օժանդակել Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծի կառուցումը: Կոնգրեսականները նշել էին, որ Կարս-Գյումրի երկաթգիծը շրջանցելն ու Հայաստանին տնտեսական եւ առեւտրային վնասներ հասցնելը հակասում է Մ. Նահանգների տարածաշրջանային երկարաժամկետ շահերին:

Սակայն ակնհայտ է, որ որեւէ լոբբիստական կառույց չի կարող խոչընդոտել Մ. Նահանգների համար կարեւոր ծրագրի իրականացմանը, եթե վերջինս բխում է աշխարհի գերհզոր տերության շահերից: Առայժմ Մ. Նահանգների կառավարությունը հստակ դիրքորոշում չի արտահայտել Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղու կառուցման եւ Վաշինգտոնի քաղաքական ու ֆինանսական աջակցության մասին: Հիշենք Ազատության աջակցության ակտի 907 ուղղումը, որով մոտ 10 տարի արգելված էր Մ. Նահանգների կառավարությանը ֆինանսական աջակցություն տրամադրել Ադրբեջանին, քանի դեռ վերջինս շարունակում է Հայաստանի եւ Լեռնային

շահագործման, իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը մի քանի տարի հետո պատրաստ կլինի: Այս նախագծերն ակնհայտորեն ուղղված էին Ռուսաստանի նավթային շահերի դեմ:

Կարս-Ախալքալաք-Թբիլիսի նախագծին ԱՄՆ-ի աջակցելը կամ չաջակցելը կարեւոր ցուցիչ կլինի Հայաստանի նկատմամբ Մ. Նահանգների տարածաշրջանային-կոմունիկացիոն քաղաքականությունը ճիշտ հասկանալու համար: Այդ նախագիծը չի կարող ուղղված լինել Ռուսաստանի դեմ, քանի որ դրա կառուցումն էականորեն չի կարող սահմանափակել ռուսական ազդեցությունը կովկասյան տարածաշրջանում: Հետեւաբար եթե Մ. Նահանգները քաղաքական եւ ֆինանսական աջակցություն ցույց տա Կարս-Ախալքալաք-Թբիլիսի նախագծին, ինչպես կասպյան խողովակաշարերի դեպքում է, ապա կնշանակի, որ Հայաստանի մեկուսացումը մեծ հաշվով չի հետաքրքրում ամերիկացիներին: Ավելին՝ շրջափակված Հայաստանը այլ ելք չի ունենա, քան կառչած մնալ Ռուսաստանից, ինչը կարծես թե մինչեւ այսօր չի գոհացրել ամերիկացիներին:

Վրաստանով Թուրքիան Ադրբեջանի հետ կապող Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծի երկարությունն, ըստ նախագծի, 98 կմ է (նկատենք, որ երկաթգծով Ախալքալաքը կապված է Թբիլիսիին, վերջինս էլ՝ Ադրբեջանին, հետեւաբար անհրաժեշտ է կառուցել միայն Կարս-Ախալքալաք հատվածը եւ վերանորոգել Ախալքալաք-Թբիլիսիի որոշ հատվածներ), որից 68 կիլոմետրն անցնելու է Թուրքիայի, 30-ը՝ Վրաստանի տարածքով: Նախագծի արժեքը տատանվում է 500-800 մլն դոլարի սահմաններում:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏ

## Աղետալի վիճակ ԱՄՆ-ի հարավում

### *Նոր Օռլեանի 80 տոկոսը հեղեղված է*

ԱՄՆ հարավում՝ Լուիզիանայի, Միսիսիպիի եւ Ալաբամայի նահանգներում շարունակվող «Կատրինա» մրրիկի զոհերի թիվն արդեն հասնում է հարյուրների: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Լուիզիանայի գլխավոր քաղաք, ջազի հայրենիք Նոր Օռլեանի 80 տոկոսը ջրածածկ է եղել եւ գրեթե կտրված է արտաքին աշխարհից:



REUTERS/ARMENPRESS

Նահանգապետ Քեթլին Բլանկոյի խոսքերով, «վնասներն անհամեմատ գերազանցում են մեր ամենամռայլ կանխատեսումները»: Իշխանությունները դժվարանում են տվյալներ հրապարակել զոհերի թվի վերաբերյալ: Նույնպիսի վիճակ է Միսիսիպիի նահանգում: Բիլոքսիի քաղաքապետ Վինսենթ Քրիլի խոսքերով, «ծովափին թերեւս հարյուրավոր զոհեր կան»:

Լուիզիանայում շարունակվում է բնակիչների տարահանումը: Որոշված է դուրս բերել Նոր Օռլեանում մնացած բոլոր անձանց: Նահանգապետը նշում է, որ թաքստոցներում եւ բարձրադիր վայրերում ապաստանած մարդիկ այլեւս խմելու ջուր եւ սնունդ չունեն, ուստի հարկ է լինում զբաղվել նաեւ պարենավորմամբ: Քաղաքի որոշ շրջաններում հայտարարված են արտակարգ դրություն եւ պարետային ժամ: Ոստիկանները շրջափակել են առավել տուժած շրջանները, որտեղի բնակիչները չկարողանան ժամանակից շուտ վերադառնալ իրենց տներ: Ենթադրվում է, թե վերադարձն անվտանգ կլինի մի քանի շաբաթ հետո միայն:

Հոսանքազրկված Նոր Օռլեանը գիշերները թաղվում է խավարի մեջ: Քաղաքի պատմական մասում՝ այսպես կոչված ֆրանսիական թաղամասում հաճախակի են դարձել գողության դեպքերը: Հարյուրավոր մարդիկ փշրում են հիմնարկների շենքերի ապակիները եւ դուրս բերում արժեքավոր իրեր: «Սուպերդոում» փակ մարզադաշտում ապաստանած հազարավոր մարդիկ անչափ ծանր պայմաններում են, քանզի օդափոխիչներն անջատված են, ներսում 32 աստիճան շոգ է:

Մշակված է հատուկ ծրագիր, ըստ որի Նոր Օռլեանում մնացած բնակիչները դուրս են բերվելու ջերմանավերով:

## Իրաքում արդեն 67 լրագրող է զոհվել

### *Դա ավելին է, քան Վիետնամի պատերազմինը*

Բաղդադում իր աշխատանքային պարտականությունները կատարելիս երեքշաբթի օրը գնդակահարվել է «Ալ Իրաքիա» հեռուստաընկերության թղթակից Ռաֆիդ Մահմուդ ալ Ռուբային: Մարդասպանները հայտնի չեն:

Իրաքն ամենավտանգավոր երկիրն է համարվում լրագրողների աշխատանքի համար: Պատերազմի ընթացքում առեւանգվել է 22 լրագրող: Առեւանգիչներն ազատ են արձակել 21-ին, իսկ իտալացի Էնցո Բալդոնիին մահապատժի են ենթարկել:

2003 թ. մարտի 22-ին պատերազմի առաջին զոհը դարձավ ավստրալական ABC ռադիոընկերության օպերատոր Փոլ Մորանը, որը սպանվեց պայթյունից: ԻՏԱՌ ՏԱՍՍ գործակալությունը նշում է, որ «Ալ Իրաքիայի» աշխատակիցը պատերազմի սկզբից ի վեր Իրաքում զոհված 67-րդ լրագրողն է: Երկու այլ լրագրողներ (բրիտանացի եւ սաուդցի) համարվում են անհետ կորած:

«Թղթակիցներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության տվյալներով, Վիետնամի հակամարտության 20 տարիներին զոհվել է 63 լրագրող: Հարավսլավիայում 1991-95 թթ. ռազմական գործողությունների զոհերը դարձան ԶԼՄ-ների 49 ներկայացուցիչներ: Ալժիրում 1993-1996 թթ. քաղաքացիական կռիվների ժամանակ զոհվեցին 20 թղթակիցներ:

Պ. Ք.

## Վրաստանն ամբաստանվում է օսերի ցեղասպանության մեջ

Հարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտին Վրաստանից պահանջել է պատասխանատվություն ստանձնել օսերի ցեղասպանության համար եւ հրաժարվել ազգայնական գաղափարախոսությունից:

Նրա խոսքերով, դա վրաց-օսական հակամարտության կարգավորման գլխավոր պայմաններից մեկն է: ՌԻԱ գործակալությունը մեջբերում է Կոկոյտիի այն խոսքերը, որ 1980-ական թվականներից սկսած Վրաստանը վերածվում է մեկ ազգի պետության: «Եթե 1980-ական թթ. սկզբներին վրացիները կազմում էին Վրաստանի բնակչության 64 տոկոսը, ապա ներկայումս նրանք կազմում են 86 տոկոս», ընդգծել է նա՝ շեշտելով, որ դա Վրաստանի ղեկավարության գաղափարախոսության հետեւանք է:

Անդրադառնալով Վրաստանի վարչապետ Զուրաբ Նողայդելու հետ հանդիպում ունենալու հնարավորությանը, Կոկոյտին ասել է, որ հանդիպումը հնարավոր կլինի գործնական արդյունքների պայմանով միայն: «Մենք ուզում ենք, որ այդ հանդիպումից թե վրացի եւ թե օս ժողովուրդներն ստանան անվտանգության որոշակի երաշխիքներ: Սադրիչ գործողությունները պետք է դադարեցվեն», ընդգծել է Հարավային Օսիայի նախագահը:

## Նաթանյահուն կփորձի դառնալ «Լիկուդի» առաջնորդ եւ Իսրայելի վարչապետ

Իսրայելի նախկին վարչապետ Բենիամին Նաթանյահուն երեկ պաշտոնապես հայտարարել է, որ մասնակցելու է աջակողմյան «Լիկուդ» կուսակցության ղեկավարի ընտրություններին եւ իր թեկնածությունն է առաջադրելու երկրի վարչապետի պաշտոնի համար:

Նաթանյահուի խոսքերով, ներկայիս վարչապետ եւ «Լիկուդի» առաջնորդ Արիել Շարոնը նահանջել է կուսակցության սկզբունքներից եւ սկսել է գործել իսրայելցի ձախերի պես: «Նա սպառնում է իր իսկ ձեռքերով քանդել այն տունը, որի կառուցմանն օժանդակել էր», հայտարարել է Նաթանյահուն:

«Հաարեց» թերթը տեղեկացնում է, որ իր թեկնածության առաջադրման առթիվ Նաթանյահուի կազմակերպած մամլո ասուլիսը կարճ ժամանակով ընդհատվել է նրա եւ Շարոնի կողմնակիցների ծեծկռտուքի պատճառով:



Ըստ Նաթանյահուի, Իսրայելին հարկավոր է այնպիսի առաջնորդ, որը կմիավորի երկիրը: Նրա խոսքերով, միայն «Լիկուդը» կարող է ապահովել քաղաքացիների անվտանգությունը եւ ձեռնարկել կաշառակերության դեմ ուղղված արդյունավետ միջոցներ:

Օգոստոսի 29-ին որոշվեց սեպտեմբերի 26-ին «Լիկուդի» կենտկոմի նիստ հրավիրել առաջիկա կուսակցական ընտրությունների հարցը քննարկելու համար: Նիստում քվեարկության արդյունքների հիման վրա թերեւս որոշում ընդունվի ընտրությունները 60 օրվա ընթացքում անցկացնելու վերաբերյալ:

Իսրայելում անցկացված վերջին հարցումները ցույց են տալիս, որ իր թեկնածությունն առաջադրելու դեպքում Շարոնը «Լիկուդի» ընտրություններում տանուլ կտա Նաթանյահուին:

Պ. Ք.

